ԵԴ1/1702/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիսի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունիսի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2026 թվականի ապրիլի 3-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Հայկ Անտոնի Գևորգյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով և Տարոն Սուրենի Շահինյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 90244926 (ԵԴ1/1702/01/26) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ա.Կարապետյան) 2026 թվականի ապրիլի 7-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 10-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ.Մեխակյան) 2026 թվականի հունիսի 19-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 22-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Հայկ Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա, ********** ** ** ****** ******* ********** ********** ********* ***, *******՝ *****, ***** ******* ********** ********** ***** ********, ******* Տարոն Սուրենի Շահինյանի հետ՝ խմբով, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու թույլտվություն, շահադիտական դրդումներով՝ թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու միջոցով եկամուտ վաստակելու նպատակով, 2025 թվականին հուլիսի 26-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 02-ն ընկած ժամանակահատվածում «Տելեգրամ» բջջային հավելվածի միջոցով քննությամբ ինքնությունը դեռևս չպարզված անձից ապօրինի ձեռք է բերել քննությամբ դեռևս չպարզված քանակությամբ թմրամիջոց, այն պեղադրել ՀՀ տարածքի տարբեր վայրերում, մասնավորապես՝ ք.Երևանում, ք.Գյումրիում, ք.Վանաձորում, ք.Սպիտակում, ք.Դիլիջանում, ք.Իջևանում, ք.Սևանում, ք.Չարենցավանում, ք.Աբովյանում, ք.Մասիսում և Արմավիրի մարզում, ինչպես նաև քննությամբ դեռևս չպարզված այլ վայրերում, այնուհետև լուսանկարել դրանք և «Տելեգրամ» բջջային հավելվածի միջոցով այդ լուսանկարներն ուղարկել է «Տելեգրամ» բջջային հավելվածի՝ քննությամբ դեռևս չպարզված օգտատիրոջը՝ արդեն իսկ համապատասխան վայրերում պեղադրված թմրամիջոցները քննությամբ ինքնություններր դեռևս չպարզված անձանց ապօրինի իրացնելու նպատակով։*

(…)

*Բացի այդ, Հայկ Անտոնի Գևորգյանը 2025 թվականի հուլիսի 24-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 02-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի գործածել է կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրամիջոց և վերոնշյալ թմրամիջոցը գործածած վիճակում վերը հիշատակված ժամանակահատվածում ներկայացել է ծառայության՝ ** ** ****** զորամաս: (...)»[1]:*

4.1. Տարոն Շահինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(...) նա, ********* ** ** ***** ******** ********** ********** ***** ********, ******՝ ******, ***** ******** ********** ********** ********** *** , ***** Հայկ Անտոնի Գևորգյանի հետ՝ խմբով, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու թույլտվություն, շահադիտական դրդումներով՝ թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու միջոցով եկամուտ վաստակելու նպատակով, 2025 թվականին հուլիսի 26-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 02-ն ընկած ժամանակահատվածում «Տելեգրամ» բջջային հավելվածի միջոցով քննությամբ ինքնությունը դեռևս չպարզված անձից ապօրինի ձեռք է բերել քննությամբ դեռևս չպարզված քանակությամբ թմրամիջոց, այն տեղադրել ՀՀ տարածքի տարբեր վայրերում, մասնավորապես՝ ք.Երևանում, ք.Գյումրիում, ք.Վանաձորում, ք.Սպիտակում, ք.Դիլիջանում, ք.Իջևանում, ք.Սևանում, ք.Չարենցավանում, ք.Աբովյանում, ք.Մասիսում և Արմավիրի մարզում, ինչպես նաև քննությամբ դեռևս չպարզված այլ վայրերում, այնուհետև լուսանկարել դրանք և «Տելեգրամ» բջջային հավելվածի միջոցով այդ լուսանկարներն ուղարկել է «Տելեգրամ» բջջային հավելվածի՝ քննությամբ դեռևս չպարզված օգտատիրոջը՝*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 231-232:

արդեն իսկ համապատասխան վայրերում տեղադրված թմրամիջոցները քննությամբ ինքնությունները դեռևս չպարզված անձանց ապօրինի իրացնելու նպատակով:

(…)

*Բացի այդ, Տարոն Սուրենի Շահինյանը 2025 թվականի հուլիսի 24-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 02-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի գործածել է կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրամիջոց և վերոնշյալ թմրամիջոցը գործածած վիճակում վերը հիշատակված ժամանակահատվածում ներկայացել է ծառայության՝ ** ** ****** զորամաս: (…)»[2]:*

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քննարկվող հարցի կապակցությամբ հանրային մեղադրող Ա.Խաչատրյանը դիրքորոշում հայտնեց այն մասին, որ իր գնահատմամբ սույն գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, քանի որ պարզված չէ արարքի կատարման վերջին վայրը, իսկ գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ գործի նախաքննությունն իրականացրած մարմնի նստավայրը գտնվել է Երևան քաղաքում:*

Պատասխանելով Դատարանի հարցերին՝ հանրային մեղադրողը նշեց.

- Արմավիրի մարզը մեղադրանքներում՝ որպես թմրամիջոց տեղադրելու վայր, վերջինն է նշվել ոչ թե այն պատճառով, որ այն հանդիսացել է թմրամիջոց տեղադրելու վերջին վայրը, այլ մեղադրանքներում ուղղակի թվարկվել են թմրամիջոցի տեղադրման վայրերը,

- Արմավիրի մարզում մեղադրյալներին իրացման նպատակով թմրամիջոց տեղադրելը վերագրվել է ոչ թե այն պատճառով, որ նրանք ձերբակալվել են

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 229-230:

Արմավիրի մարզի տարածքում, այլ ուրիշ ապացույցներով է հիմնավորվում, որ մեղադրյալները իրացման նպատակով նաև Արմավիրի մարզում են թմրամիջոց տեղադրել,

- եթե շարժվենք Դատարանի բարձրացրած հարցի տրամաբանությամբ, որ իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցը հայտնաբերվել է ավտոմեքենայի՝ Արմավիրի մարզում կատարված խուզարկությամբ, ապա այդ դեպքում կստացվի, որ գործն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին,

*- մեղադրանքներում ձևակերպում տալով այն մասին, որ 2025 թվականի հուլիսի 24-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում մեղադրյալները գործածել են թմրամիջոց, ապա ծառայության ներկայացել ** ** ***** զորամաս՝ նկատի է ունեցել այն, որ հիշյալ ժամանակահատվածում՝ մի օր, պարտադիր չէ օգոստոսի 2-ին, մեղադրյալները թմրամիջոց գործածած վիճակում ծառայության են ներկայացել:*

*Պաշտպան Ա.Սահակյանը դիրքորոշում հայտնեց այն մասին, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իր պաշտպանյալները չեն ընդունում ներկայացված մեղադրանքները, իսկ արարքների կատարման ավարտի վայրի մասին դիրքորոշում հայտնելը կնշանակի, թե համաձայն են ներկայացված մեղադրանքի հետ՝ ինքն այդ խնդրին չի անդրադառնա և գտնում է, որ գործը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ թիվ ***** զորամասը գտնվում է ***** ****** տարածքում:*

(...)

Սույն դեպքում, վերը մեջբերված իրավակարգավորումների և մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով քննարկվող հարցին՝ Դատարանն արձանագրում է, որ, ըստ մեղադրանքների փաստական մասի նկարագրության՝ Տարոն Շահինյանը և Հայկ Գևորգյանը իրացման նպատակով ու շահադիտական դրդումներով ձեռք են բերել թմրամիջոց, որը տեղադրել են ՀՀ

տարբեր վայրերում, ընդ որում՝ պարզված վայրերից Արմավիրի մարզը մեղադրանքներում նկարագրված է որպես թմրամիջոցի տեղադրման վերջին վայր:

Հատկանշական է այն հանգամանքը, որ վերոգրյալ հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով (երբ թմրամիջոց տեղադրելու համատեքստում ինչ-որ գործողություն են արել) մեղադրյալները ձերբակալվել են Արմավիրի մարզի տարածքում: Այլ կերպ՝ մեղադրյալների ձերբակալման փաստով է դադարել նրանց հանցավոր գործունեությունը, այսինքն՝ ենթադրյալ հանցանքն ավարտվել է Արմավիրի մարզի տարածքում: Ընդ որում՝ դատարանները մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունները քննելիս ձերբակալումները ճանաչել են իրավաչափ՝ արձանագրելով, որ առկա է եղել հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած:

Ավելին, թեև մեղադրանքներում՝ 1-ին դրվագով, թմրամիջոցի որևէ տեսակ կամ դրա չափ չի նշվել, սակայն, Դատարանի ուշադրությունից չի կարող վրիպել այն հանգամանքը, որ մեղադրյալների ավտոմեքենան խուզարկվել է Արմավիրի մարզի տարածքում, ու դրանից հայտնաբերվել է թմրամիջոց (թեև ձերբակալման փաստով թմրամիջոցն արդեն դուրս էր եկել նրանց տիրապետությունից), որը հետագայում ճանաչվել է իրեղեն ապացույց, և դա, ինչպես նաև ավտոմեքենայի խուզարկության արձանագրությունը մեղադրական եզրակացությամբ վկայակոչվել են որպես մեղադրանքը հիմնավորող ապացույցներ:

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ թիվ ****** զորամասը գտնվում է ****** ****** տարածքում, և մեղադրյալները թմրամիջոց գործածած վիճակում այդ զորամաս են ծառայության ներկայացել, ապա անկախ այն հանգամանքից, որ վերագրվող երկու արարքների դեպքում էլ մեղադրանքներում՝ որպես ենթադրյալ արարքների կատարման ավարտ, նշվել է 2025 թվականի օգոստոսի 2-ը՝ ակնհայտ է, որ թեկուզ նույն օրվա ընթացքում վերջինն ավարտվել է մեղադրյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով վերագրվող*

արարքը, քանի որ այն կատարելիս են մեղադրյալները անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել (ողջամտորեն մինչև ձերբակալվելը կարող էին թմրամիջոց գործածած վիճակում ծառայության ներկայանալ)։

Հետևաբար, գործն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, իսկ նման պայմաններում սույն քրեական գործի քննությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալների արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, և արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման։ (…)»[3]։

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունիսի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը որպես մեղադրյալներին վերագրվելիք արարքների ավարտման պահ դիտարկել է մեղադրյալների Արմավիրի մարզի դատական տարածքում ձեռբակալված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ, ըստ մեղադրանքների, որպես թմրանյութի ենթադրյալ տեղադրման վերջին վայր է հիշատակվել Արմավիրի մարզը, մինչդեռ Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի հանցակազմի դիսպոզիցիայի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված գործողություններից նույնիսկ մեկի կատարմամբ արդեն իսկ արձանագրվում է հանցագործության ավարտման փաստը, ուստի հանցանքի ավարտման պահը որոշելիս որևէ նշանակություն չի կարող ունենալ, թե իրացման նպատակով որ վայրում է տեղադրված եղել թմրամիջոցը, երբ է հայտնաբերվում կամ առհասարակ հայտնաբերվում է, թե ոչ։ Ավելին՝ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների բովանդակային ուսումնասիրություն ակներև է դառնում, որ Տարոն Շահինյանի և*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 38-45։

Հայկ Գևորգյանի դեպքում դատարանը թմրամիջոցների ապօրինի ենթադրյալ իրացման գործում պայմանավորված է եղել թմրամիջոցների փաթեթները որոշակի վայրերում տեղադրելով, հետևաբար քրեաիրավական առումով որևէ նշանակություն չի կարող ունենալ իրացման նպատակով որոշակի վայրերում տեղադրված թմրամիջոցների հայտնաբերման վայրը (օրը)։

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը դուրս է եկել մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների սահմաններից և որպես հանցանքների ավարտման պահ է դիտարկել նրանց ձերբակալման պահը, որը ներկայացված մեղադրանքներում առկա չէ։ Ավելին՝ այն, որ մեղադրանքում որպես «վերջին» տեղադրման վայր նշանվել է Արմավիրի մարզը, դեռևս չի նշանակում, որ ենթադրյալ հանցանքներն ավարտվել են հենց այնտեղ, քանի որ մեղադրանքների ուսումնասիրությունից երևում է, որ ենթադրյալ թմրամիջոցների տեղադրման վայրերը մեղադրանքներում թվարկվել են պատրահական հաջորդականությամբ, որից հետո նշվել է «քննությամբ դեռևս չհայտնաբերված այլ վայրերում» արտահայտությունը։ Ավելին՝ հենց դատական նիստի ընթացքում հանրային մեղադրողն ինքն է փաստել, որ պարզված չէ արարքների կատարման վերջին վայրերը, ինչպես նաև մեղադրանքներում Արմավիրի մարզը նշվել է վերջինը ոչ թե այն պատճառով,որ այն հանդիսացել է թմրամիջոց տեղադրելու վերջին վայր, այլ մեղադրանքներում ուղղակի թվարկվել են թմրամիջոցի տեղադրման վայրերը, իսկ Արմավիրի մարզում մեղադրյալներին իրացման նպատակով թմրամիջոց տեղադրելը նկարագրվել է ոչ թե այն պատճառով, որ նրանք ձերբակալվել են Արմավիրի մարզի տարածքում, այլ ուրիշ ապացույցներով է հիմնավորվում, որ մեղադրյալներն իրացման նպատակով նաև Արմավիրի մարզում են թմրամիջոց տեղադրել։

Վերոշարադրյալի հետ պետք է արձանագրել, որ մեղադրյալներին վերագրվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված

*արարքների կատարում՝ թմրամիջոց գործածած վիճակում ** ** ***** զորամաս ներկայանալը, որը գտնվում է ***** ****** ***** ****** ******** ******** ******** դատարանի դատական տարածքում՝ ******* ******* *******: Այլ կերպ՝ թմրամիջոց գործածած վիճակում զորամաս ներկայանալն արդեն իսկ համարվում է ենթադրյալ հանցանքի ավարտման պահ: Ավելին՝ ներկայացված մեղադրանքներում որպես հանցանքների կատարման ժամանակահատված է նշվել 2025 թվականի հուլիսի 24-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 02-ն ընկած ժամանակահատվածը, իսկ թե որ հանցանքը կոնկրետ երբ է ավարտվել, ներկայացված մեղադրանքներում պարզ չէ:*

Վերոգրյալի կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ նմանատիպ դեպքերի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է հատուկ կարգավորում՝ համաձայն որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, իսկ սույն քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի կողմից, որը գտնվում է Երևան քաղաքում:

Անհրաժեշտ է փաստել նաև, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների գերակշիռ մեծամասնությունը բացի պաշտպան Արթուր Սահակյանից բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

(…)

Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով վերը նշված պարճառաբանությանը, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանին, գտնում է, որ գործի հետագա քննությունը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալներ՝ Տարոն Սուրենի Շահինյանի և Հայկ Անտոնի Գևորգյանի արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական գործն ընդդատյա է Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական գործով վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հետ համաձայն չլինելու հիմքով: (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 53-56:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ համաձայն մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների՝ վերջիններիս կողմից որպես թմրամիջոցի տեղադրման վերջին պարզված վայր նշված է Արմավիրի մարզը, ինչպես նաև հաշվի առնելով, որ մեղադրյալները հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել են Արմավիրի մարզի տարածքում, գտել է, որ ենթադրյալ

հանցանքն ավարտվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն անդրադառնալով թմրամիջոց գործածած վիճակում ***** ******* գտնվող զորամաս ծառայության ներկայանալուն՝ փաստել է, որ թեև մեղադրյալներին վերագրվող երկու արարքների դեպքում էլ մեղադրանքներում՝ որպես ենթադրյալ արարքների կատարման ավարտ, նշվել է 2025 թվականի օգոստոսի 2-ը, սակայն մեղադրյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով վերագրվող արարքն է ավարտվել վերջինը, քանի որ այն կատարելիս են մեղադրյալներն անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել[8]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը դուրս է եկել մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների սահմաններից և որպես հանցանքների ավարտման պահ է դիտարկել նրանց ձերբակալման պահը, որը ներկայացված մեղադրանքներում առկա չէ:

Բացի այդ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նշելով, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներում թմրամիջոցների տեղադրման վայրերը թվարկվել են պատահական հաջորդականությամբ, որից հետո նշվել է նաև «քննությամբ դեռևս չհայտնաբերված այլ վայրերում» արտահայտությունը, գտել է, որ ներկայացված մեղադրանքներից չի փաստվում, որ ենթադրյալ հանցանքներն ավարտվել են Արմավիրի մարզի տարածքում:

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Վերոգրյալի հետ մեկտեղ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստելով, որ մեղադրյալներին վերագրվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարում, որի կատարման ժամանակահատվածը նույնպես մեղադրանքում նշված է մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ը, գտել է, որ նման պայմաններում պարզ չէ, թե մեղադրյալներին վերագրվող որ հանցանքը կոնկրետ երբ է ավարտվել, հետևաբար մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը [9]:

13. Սույն վարույթի նյութերի, ինչպես նաև Տ.Շահինյանին և Հ.Գևորգյանին ներկայացված մեղադրանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջիններին վերագրվում են խմբով, շահադիտական դրդումներով, եկամուտ վաստակելու նպատակով քննությամբ չպարզված քանակությամբ թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և այն ՀՀ տարածքի տարբեր վայրերում տեղադրելու, ինչպես նաև կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրամիջոց ապօրինի գործածելու և վերոնշյալ թմրամիջոցը գործածած վիճակում ծառայության վայր ներկայանալու ենթադրյալ արարքների կատարում: Մասնավորապես, ըստ ներկայացված մեղադրանքների՝ Տ.Շահինյանը և Հ.Գևորգյանը շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով, ենթադրաբար ապօրինի ձեռք են բերել քննությամբ դեռևս չպարզված քանակությամբ թմրամիջոց, որն էլ 2025 թվականի հուլիսի 26-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում տեղադրել են ՀՀ տարածքի տարբեր վայրերում՝ մասնավորապես Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Սպիտակում, Դիլիջանում, Իջևանում, Սևանում, Չարենցավանում, Աբովյանում, Սիսիանում, Արմավիրի մարզում, ինչպես նաև քննությամբ դեռևս չպարզված այլ վայրերում, բացի այդ 2025

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

թվականի հուլիսի 24-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում թմրամիջոց գործածած վիճակում ներկայացել են ծառայության վայր՝ ***** ******* ********* ** ** ***** զորամաս:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ մեղադրյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածով վերագրված ենթադրյալ հանցանքի կատարման վայրն է ***** ******, հաշվի առնելով, որ մեղադրյալները թմրամիջոց գործածած վիճակում ներկայացել են ***** ******* գտնվող զորամաս: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով վերագրված ենթադրյալ հանցանքի կատարմանը, ապա ըստ ներկայացված մեղադրանքների՝ Տ.Շահինյանը և Հ.Գևորգյանը թմրամիջոցներ են տեղադրել ՀՀ տարածքի տարբեր, այդ թվում քննությամբ չպարզված վայրերում, հետևաբար պարզ չէ, թե կոնկրետ որտեղ է կատարվել հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը կազմող վերջին գործողությունը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներում Արմավիրի մարզը վերջինը նշելու, ինչպես նաև մեղադրյալների՝ Արմավիրի մարզի տարածքում ձերբակալվելու հանգամանքները, այլ վերաբերելի փաստական տվյալների բացակայության պայմաններում, չեն կարող հիմք հանդիսանալ հաստատապես փաստելու, որ մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցանքը կատարվել (ավարտվել) է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ համաձայն մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների՝ վերջիններս ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով և 531-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքները ենթադրաբար կատարել են մինչև 2025 թվականի օգոստոսի 2-ը, հետևաբար պարզ չէ, թե որն է մեղադրյալների կողմից ենթադրաբար կատարված վերջին հանցանքը:

14. Նման պայմաններում, ընդունելի է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն առ այն, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

16. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայկ Անտոնի Գևորգյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով և Տարոն Սուրենի Շահինյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ1/1702/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ